



Հակոբ Պարոնյան

Ազգային շոշեր

ՏԻԳՐԱՆ ԻԻՍՈՒՖԵԱՆ

Պատմագիրները համաձայն չեն Տիգրան Իսուֆեանի ծննդեան թուականին վրայ: 1850 թուականին ծնունդ կու տան անոր այն պատմագիրներն, որ ամուսնացնելու աղջիկ ունին. ուրիշներն, որ անոր նախազահութեանը տակ կորուսեր են իրենց դատը, 1820-ին կը ստեղծեն գայն: Իսկ մենք, որ հաճոյք մը չենք զգար կիներու մէջ տարիքի խնդիր յուզելով, կ'ըսենք թէ այս երեսփոխանը Միջագիղ ծնած է 1835-ին, 1854-ին եւ 1875-ին: 1835-ին՝ եթէ դէմքին նայիս, 1854-ին՝ եթէ պարահանդէսի մը մէջ գտնուի, իսկ 1875-ին՝ եթէ հասակին նայիս:

Ծնած ժամանակն այնքան նիհար էր, որ եթէ Լիկուրգոսի օրով ծնած ըլլար՝ անպատճառ ջուրը ձգուած պիտի ըլլար:

Մանկութեան օրերուն մէջ հանդարտ ու հեզաբարոյ ըլլալով՝ բնաւ պատճառ չէր տար ստնտուին, որ զինքը կսմթէ: Գիշերներն այնպէս խոր քուն կը քաշէր ինչպէս որ կը քաշէ, երբ իրեն երթաս եւ բանաս իրեն այնպիսի խօսակցութիւն մը, որ բնաւ վերաբերութիւն չունի դատի հետ: Ձմեռուան այն երկար գիշերներուն մէջ անգամ մը միայն կ'արթննար եւ այն ալ ոչ թէ լալու կամ կաթ ուտելու համար, այլ իր թաթիկներովն ստնտուին ծիծերը բռնելով քնանալու համար: Ամէն երախայ, ինչպէս յայտնի է, ունի այս սովորութիւնը, սակայն կ'երեւի թէ այս երախան բաւական ատեն հետեւած է այս սովորութեան, վասն զի, կ'ըսեն ոմանք, չորս տարեկան եղած ատեն, տան սպասուիկները Տիգրանիկէն կը գանգատին եղեր:

Տղայական խաղերու բնաւ շէր մասնակցեր. խելքն ու միտքը պարզեաբաշխութեան հանդէսին վրայ էր: Ամէն կիրակի իրեն հասակակից աղջիկներ ու մանչեր տուն հրաւիրելով՝ աթոռներու վրայ կը բազմեցունէր, ինքն ալ սեղանի մը վրայ կ'ելնէր... ճերմակ ձեռնոցներով եւ կարճ, բայց ազդու ատենաբանութեամբ աղջիկներուն երեսը կը նայէր... դաստիարակութեան օգուտներն անոնց գգալ տալու համար:

Ամիրայութեան մեծ փափաք ունէր. իր կարճ բայց ազդու հասակովն ամիրայութեան բարձրանալ կ'ուզէր, վասն զի ամէն բարօրութիւն հոն կը փնտռէր. ուստի նախատինք կը համարէր տեսութիւն ընել այն ամէն մարդերու հետ, որ ամիրայական արգանդէ մը ծնած շէին: Օր մը նպարավաճառի մը դրկուեցաւ, որ քիչ մը պանիր առնէ, բայց ինքն երբ տեսաւ, որ նպարավաճառն ամիրայ շէր, առանց պանիր առնելու ետ դարձաւ:

Երբ եօթը տարեկան եղաւ, թաղին վարժարանը դրուեցաւ, որ ուսում առնէ: Այն ատենները վարժարաններու մէջ ամէն բան կը գտնուէր բացի ուսումէ. որով Տիգրանիկն ալ ուսումէն զատ ուրիշ ինչ որ գտաւ առաւ թաղային վարժարանէն:

1850-ին Բարիզ գնաց եւ վաճառականութեան դպրոցը մտաւ հոն: Մեծ յաջողակութիւն ցոյց տուաւ այն ուսման՝ զոր մենք վաճառականութիւն կ'անուանենք եւ որուն Խաբէութիւն անունը կը կարդայ Վովրնարկ: Քիչ ատենի մէջ կատարեալ սորվեցաւ մարդ խաբելու սկզբունքներն, զորք պիտի գործադրէր վաճառականութեան մէջ: Սակայն բախտը, որ եթէ չժպտիր ապուշներու, երբեմն անոնց պաշտպան կը հանդիսանայ, ըսաւ Տիգրանին.

«Պարոն, եթէ զքեզ վաճառական ընեմ՝ մահկանացուներուն գլխուն փորձանք մ'ալ պիտի աւելցնեմ: Արդէն վաճառականները պատժել կ'ուզէի, բայց անանկ պատիժ մը կ'ուզէի, որ խիստ ըլլար: Ուրախ եմ այսօր զքեզ գտնելուս վրայ. գնա ուրեմն դատաւոր անունով պատիժ եղիր այդ վաճառականներուն վրայ»:

Բախտին պատգամը կատարուեցաւ, Իւսուֆեան առետրական ժողովներէն մէկուն նախ անդամ եւ յետոյ ամբողջութիւնն (նախագահ) եղաւ:

Նախնիք Արդարութիւնը տեսած պիտի ըլլան, որ գայն կշիռ ի ձեռին կը ներկայացնեն. անոր բարի ըլլալն ալ ճանչցած են անշուշտ, որ այնչափ յարգ ու պատիւ կ'ընծայեն անոր. մենք դժբախտաբար ժողովներու մէջ ալ իրեն հանդիպած չունինք, որ տեսնէինք, ճանչնայինք եւ կարենայինք այսօր ըսել, թէ Իւսուֆեան շատ լաւ կամ գէշ կը վարուի Արդարութեան հետ: Շատերը, որ մօտէն կը ճանաչեն Իւսուֆեան Էֆենտին, կ'ըսեն թէ Արդարութեան ներկայացուցիչն է ան եւ թէ Արդարութեան պէս կշիռ մը ունի ձեռքը, սակայն պնդողներ ալ կը գտնուին թէ՛ այդ կշիռը ծախու առնուած է նպարավաճառէ մը, որ պակաս կշռելուն համար ամէն օր տուգանք կը վճարէր: Աս անհաւատալի է:

Կը տեսնէ՞ք փաստաբանները ի՛նչպէս ուշի ուշով մտիկ կ'ընեն, որպէսզի կէտ մը բռնեն եւ ինձի դէմ դատ բանալ տալով քառասուն-յիսուն ոսկի վաստկին...

Պարոն փաստաբաններ, մի՛ պարծենաք կենսագրութիւններու մէջ զիս դատի հրաւիրելու բնութիւն ունեցող կէտեր գտնելուդ վրայ, որովհետեւ կենսագրութիւններս կազմող բոլոր կէտերն նոյն բնութիւնն ունին: Այս պարագայիս մէջ կը նմանցնեմ զձեզ այն ձկնորսին, որ այս օրերս տասը բալամուտ որսալուն վրայ կը պարծենայ, քանի որ շաբաթէ մը ի վեր ծովը բալամուտով լեցուած է: Բայց քանի որ ձեզմէ շատերը յօդուածի մը մէջ աւելի իրենց գործ կը փնտռեն քան թէ արդարութիւն, ես ալ խոհեմութիւն կը բանեցնեմ եւ խօսքս կը փոխեմ:

Առանց ասոնց կամ անոնց ըսածներուն ականջ կախելու՝ ես կ'ըսեմ թէ Տիգրան Էֆենտի Իւսուֆեան միշտ արդարութեամբ վարուած է, որովհետեւ ուրիշ կերպով վարուիլը անկարելի է: Մեր բոլոր ժողովներուն մէջ արդարութիւնը միշտ կը փայլի իւր բացակայութեամբը: Տիգրան Էֆենտի շատ ճշտութիւն կը պահէ իւր պաշտօնին մէջ. օրինակի համար, եթէ պատիւ ունենաս օր մը իրեն ներկայանալու... դատով, նախ եւ առաջ քեզի պիտի ըսէ.

Նախ՝ աս կողմը անցիր:

Երկրորդ՝ շիտակ կայնէ:

Երրորդ՝ գլուխդ վեր բռնէ:

Չորրորդ՝ ձեռքդ վար առ:

Եւ դուն այս հրամանները լսելով, անշուշտ պիտի կարծես թէ, դերձակի մը առջեւ կը գտնուիս, որ չափդ պիտի առնէ. բայց կը սխալիս, դատաւորի մը առջեւն ես. եւ ո՛ր ժողովին մէջ որ մտնես, այդ հրամանները պիտի կատարես:

Տիգրան Էֆենտին այնչափ կը փափաքի ազգին ծառայութիւն ընել, որ հարիւր հոգոյ գլուխ հանելիք գործը միայն կ'ուզէ կատարել: Սուտ չեմ խօսիր: Գնա օր մը իրեն ըսէ՛.

Էֆենտի՛, թաղիս մէջ կ'ուզենք բարեգործական ընկերութիւն մը կազմել:

Վսեմ գաղափար:

Կը փափաքինք, որ հրամանքնիդ ալ ատենապետ ըլլար:

Սիրով կ'ընդունին:

Այս պատասխանը առնելէդ ետքը դուրս ելիր սենեակէն եւ դռան քովը կեցի՛ր:

Ահա ուրիշ մը կը մտնէ.

Էֆենտի, որոշեցինք վարժարաններու նպաստելու համար ընկերութիւն մը հաստատել:

Շատ ազգօգուտ ձեռնարկութիւն:

Արդեօք կ'ընդունէի՞ք...

Ատենապետութի՞ւնը... սիրով կ'ըն...

Կ'ընդունէի՞ք տասը բաժին...

Ընկալագիրն ամսէ մը դրկէ՛:

Սենեակէն դուրս ելած ատենը ասոր ձեռքէն քաշէ եւ քովդ կայնեցոր:

Երրորդ մը կը մտնէ.

Բարեւ, Էֆենտի:

Աստուծոյ բարին:

Մսավաճառի խանութ մը բանալ կ'ուզենք ընկերութեամբ:

Ազգային դաստիարակութիւնը զարգացնելու ամէնէն կարճ ճամբան...

Ի՞նչ կ'ըսէք:

Շատ աղէկ խորհեր էք. առողջ մարմին, առողջ միտք, կ'ըսէ առածը. հետեւապէս մարդս որչափ միս ուտէ, այնչափ առողջ միտք կ'ունենայ. ուստի որչափ շատնայ մսավաճառութիւնն՝ այնչափ կը շատնայ բանաստեղծութիւնը, գրականութիւնը եւ այլն:

Շնորհակալ ենք, ի՞նչ պէտք է այս գործը գլուխ հանելու համար:

Ատենապետ մը, եւ այն ատենապետն ալ ես կ'ըլլամ:

Դռան քովն ես կարծեմ, ասոր ալ օձիքէն քաշէ եւ չորրորդին սպասէ, որ ահա կու գայ.

Բարեւ, Էֆենտի:

Աստուծոյ բարին:

Քանի մը երիտասարդներ մէկտեղ եկած ընկերութիւն մը հաստատած են. ասոնք ոչ իրենց ըրածը գիտեն եւ ոչ ալ ընելիքը. այսպիսի ընկերութիւններն ազգին չարիք հասցնելէն ուրիշ բանի մը չեն ծառայեր, ուստի մենք որոշեցինք ընկերութիւն մը կազմել... այդ ընկերութիւնը կործանելու համար:

Բուն հայութիւնն ալ աս է:

Մեզի կ'օգնէ՞ք այս պարագային մէջ:

Ինչո՞ւ չէ, քանի որ կ'ըսէք թէ ազգին վնասակար է, պէտք է որ կործանուի:

Ես անոր ատենապետը կանչել կու տամ եւ կը խօսիմ:

Ատենապետը կանչել կու տա՞ք...

Այո՛, պիտի վախնա՞մ իրմէ:

Բայց այդ ընկերութեան ատենապետը... դուք էք:

Ե՞ս եմ... Տէր ողորմեա... ի՞նչ փոյթ թէ ես եմ. քանի որ նպատակին չի ծառայեր կ'ըսէք, պէտք է կործանել:

Շնորհակալ եմ:

Մեր պարտքն է կործանել այն բոլոր վնասակար ընկերութիւնները, ով որ ալ ըլլան անոնց ատենապետները:

Կը կարծէք թէ կը կործանե՞ք. քաւ լիցի. կը կարծէք թէ կը շինե՞ք, երիցս քաւ լիցի. այնչափ ընկերութիւններու անդամ է, որ ժամանակ չունի ո՛չ կործանելու, ո՛չ ալ շինելու: Ստոյգը խօսելու համար Տիգրան Էֆենտի Իսուֆեան ազգին յառաջադիմութեանը մեր ամենէն աւելի փափաքողներէն է, եւ այս չափազանց փափաքով է անշուշտ, որ ամենուն մէկէն հասնիլ կ'ուզէ եւ ոչ մէկուն կրնայ հասնիլ: Ո՛չ անցեալ եւ ոչ սա դարուս մէջ չկայ ընկերութիւն մը, որուն կամ ատենապետն՝ կամ անդամ չըլլայ, եւ ինչպէս որ վարդն առանց փուշի չըլլար, ընկերութիւնն ալ առանց Իսուֆեանի չկրնար ըլլալ առակաբանութիւնը միմիայն վարդին փուշէն անբաժանելի ըլլալուն վրայ է, երեսս ի՛նչ կը նայիք, ո՛վ չարամիտներ:

1868-ին անդամ եղաւ այն խնամակալութեան, որ յառաջ պիտի տանէր Շահ-Նագար եւ Նուպարեան վարժարանը, որ վերջէն աշխարհաժանօթ եղաւ իւր... կործանմամբը: Արդարութիւնը խօսելու համար իւր աշխատութիւնը չզլացաւ հոն Իսուֆեան Էֆենտին, եւ ջանաց, որչափ որ կրնար, կանգուն պահել այդ շէնքը, բայց որովհետեւ անհատի մը կամքն ու ջանքն միայն բաւական չեն պայծառ պահել այնպիսի շէնք մը, որ ժողովրդեան քաջալերութեամբը միայն

կրնար յարատևութիւն գտնել, ուստի եւ գոցուեցաւ: Հոն կը գտնուէին աշակերտներ, որ կէս թոշակով ընդունուած էին եւ քառորդն վճարել կը դժկամակէին, կային աշակերտներ, որ թոշակն բնաւ չէին վճարեր եւ միայն կ'ուտէին կը խմէին, կային որ դրամ մը չվճարելէն գատ կը փափաքէին, որ իրենց հագուստն ալ դպրոցէն շինուի: Այսպէս կը վարուին ասիական մեր ազգայիններն, երբ իրենց գաւակներն ազգային մասնաւոր վարժարանի մը մէջ դնեն. իսկ ընդհակառակն՝ պահանջուածէն աւելի կու տան, երբ օտարի մը յանձնեն իրենց գաւակները:

1870-ին երեսփոխան ընտրուելով՝ հրաւիրուեցաւ երեսփոխանական ժողովոյ մէջ աթոռի վրայ բազմելու: Այս ժողովոյ մէջ բաւականէն աւելի գործեց, որովհետեւ հոն գործելը լեզուով էր ոչ թէ ձեռքով: Իւր ատենաբանութիւններն երբեմն տարապայման կ'երկնային՝ եւ ունկնդիր ժողովրդեան գլխուն ցաւ կը պատճառէին. թէպէտեւ շատերը կը յարգեն Իսուֆեան Էֆենտիին ատենախօսութիւններն իբրեւ... քրտնեցուցիչ դեղ. եւ այս է պատճառը, որ հարբուխ եղողները փոխանակ թէյ խմելով կամ ոտքերը տաք ջուրի մէջ դնելով քրտնել աշխատելու՝ Իսուֆեան Էֆենտիի երկարածիգ ատենախօսութիւնները մտիկ կ'ընէին եւ քրտնելով բժշկութիւն կը գտնէին: Եթէ սովորութիւն ըլլար, որ թոյլ տրուէր կիներու մտնել երեսփոխանական ժողովին մէջ, շատ մը կիներ ուխտի կ'երթային անոր երկարապոչ ատենախօսութիւններուն: Երբ կարճ կը խօսէր՝ լաւ կը բացատրէր իւր միտքն եւ զօրաւոր փաստերով կ'ըմբերանէր իւր հակառակորդները: Ճշմարտութիւնը կը հարկադրէ գմեգ խոստովանիլ, որ լակոնական ոճին մէջ շատ յառաջ գացած է իւր... հասակը, եւ երբ զինքը տեսնեմ՝ մտքէս կ'ըսեմ.

Ո՛վ մարդ լակոնական, այդ հասակիդ ոճը ինչո՞ւ չես գործածեր ատենախօսութիւններուդ մէջ:

Ոչ միայն երեսփոխանական ժողովոյ մէջ, այլ վարժարաններու եւ թատրոններու մէջ ալ ըրած է ատենաբանութիւններ, որոնց թիւն այսօր վեց հազար ութը հարիւր իննսունը վեցի կը հասնի: Իւր ատենաբանութիւններուն մէկ մասը կը սկսի «Խնամակալուի տիկնայք»ով, մէկ մասը «Տեարք եւ տիկնայք»ով, մէկ մասն ալ «Տեարք»ով:

Ամեն պարզեաբաշխութեան հանդէսներն ինք կը բանայ. եթէ երկու կամ երեք հանդէս մէկ օրուան հանդիպին՝ երկուքին ալ կամ երեքին ալ կը հասնի, եւ դաստիարակութիւնը բնաբան դնելով կը համոզէ հանդիսականներն, որ ստակ տան: Իր համոզողական խօսքերուն շնորհիւն է, որ այսօր Միջագիտի Ս. թարգմանչաց վարժարանը գոցուելու վիճակի մէջ ինկած է:

1872-ին անդամ ընտրուեցաւ քաղաքական ժողովին, որուն ատենապետն էր Ապրո Էֆենտի, որուն հասակը լակոնական ոճի բնաւ չէր համապատասխաներ: Իւսուֆեան Էֆենտին ատենադպիր էր եւ երբ ատենապետին քովն նստէր՝ մարդս ինքնիրեն կ'ըսէր.

«Եթէ այս երկու մարդերու կարծիքներն այնպէս են, ինչպէս իրենց հասակները, ժողովը շատ դժուարութիւն պիտի քաշէ որոշում մը տալու համար»:

Որոշ չգիտցուիր թէ այն ատեն ի՛նչ գործ տեսաւ Քաղաքական ժողովն: Միայն սա յայտնի է, որ Պրուսիայի առաջնորդ գեր. Բարթուղիմէոս եպիսկոպոս հոս կանչուեցաւ. վերջը նորէն տեղը դրկուեցաւ, դարձեալ հոս բերուեցաւ, վերստին տեղը դրկուեցաւ, նորէն ետ պիտի կանչուէր, եթէ Քաղաքական ժողովին պայմանաժամը լրացած ըլլալով՝ չհրաժարէր պաշտօնէն: Եւ որովհետեւ օրէնք չէ Քաղաքական ժողովոյ ատենագրութիւններն ի լոյս ընծայել անշուշտ աջ ձեռքին գործած բարիքները ձախին ցոյց չտալու համար բնական է, որ անոր մեզի ըրած աղէկութիւնները չկարենանք յիշել: Եթէ պաշտօնեաներուն վկայութեանը դիմենք, մինչեւ այսօր ասոնցմէ եւ ոչ մին քաջութիւն ունեցած է խոստովանելու թէ ձեռքէս եկածին չափ աշխատեցայ ազգիս չարիք հասցնելու եւ խիղճս հանգիստ է: Քաղաքական ժողովոյ անդամ մը երբ իր պաշտօնէն հրաժարի, կ'ըսէ.

«Աշխատեցայ որչափ որ կարողութիւնս կը ներէր մեր ժողովին գործերուն մէջ կանոնաւորութիւն մուծանել. շատ բարիք ըրինք ազգին, բայց նա չճանչցաւ. եթէ մեր տեղը ուրիշ Քաղաքական ժողով մը ըլլար՝ ազգին վիճակը գէշ էր»:

Չիմա շատ աղէկ է... խոստովանիմ եւ հաւատամ:

Տնտեսական խորհրդոյ անդամ մը կ'ըսէ.

«Մեր պաշտօնի գլուխ անցած ժամանակ սնտուկը շատ պարտք ուներ, իսկ հիմա քիչ պարտք ունի, զոր վճարելու անկարող է»:

Ա՛յ այնչափ մեր յոյսը կտրած ենք ազգային սնտուկն պարտքէ խալսելէ, որ անոր քիչ պարտք ունենալն մեզի երջանկութիւն կը համարինք:

Վերջապէս ամէն պաշտօնեայ իր անձնանուիրութիւնը կը համարէ եւ շատ զարմանալի է, որ ազգն այսչափ բարերարներ ունենալով չկարենայ լաւագոյն վիճակի մը մէջ գտնուիլ: Մենք առանց գիտնալու թէ Իւսուֆեան Էֆենտին ի՛նչ ընթացք բռնած է իր այս պաշտօնին մէջ, կրնանք վկայել, որ վարուած չէ ոմանց պէս, որոնք ազգային պաշտօնատեղին այնպէս կ'երթան, ինչպէս կ'երթաս դուն վաճառատունդ, միսն իր խանութը եւ ես իմ գրասենեակս: Շատ մը պաշտօնեաներ կան, որոնք ազգային պաշտօններու շնորհիւ իրենց շնդկաստանի ճամբան ապահոված են:

Իւսուֆեան Էֆենտին պատիւ ունեցած է քանի մը անգամներ Միջագիտի թաղական խորհրդոյ մէջ գտնուելու, բայց երբեք թաղական խորհրդարանի մէջ: Այսօր հաստատուած ճշմարտութիւն մ'է, որ եթէ զինուորական ասպարէզին մէջ գտնուելով՝ զօրաբանակի մը հրամանատար անուանուէր պատերազմի ժամանակ, եւ եթէ այդ զօրաբանակն ալ Պաղտատ գտնուէր՝ ինքն իր թիկնոցին մէջ փաթթուած՝ իր Միջագիտի տունէն դուրս չպիտի ելնէր եւ Պոլսոյ մէջ հրամանատարութիւն պիտի ընէր Պաղտատի մէջ գտնուած զօրքերուն: Եթէ իրեն դիտողութիւն ընէին՝ այն ատեն իրեն խոհարարը պիտի դրկէր պատերազմի դաշտին վրայ իր հրահանգները զօրաց հաղորդելու համար: Բնաւ կարեւորութիւն չտար այն վնասներուն, որ յառաջ կու գան որեւէ պաշտօն մը ստանձնելով զայն չկատարելէ: Եւ ահա այս սկզբունքով է, որ թաղական խորհրդարան երթալով՝ իր պաշտօնին գլուխը անցած չէ: Բայց իր ընկերներէն մին սնտուկը պարպած է, քահանաներուն իրաւունքն իր կոկորդն անցուցած է, աղքատին դրամը կլլեր է, ի՞նչ փոյթ. բաւական է, որ ինքն ատանկ բան մը ըրած չէ եւ հետեւապէս պատասխանատուութիւնը երբեք իր վրան չառնէր: Անհոգութենէ ծագած վնասներն իրեն համար առաքինութիւն կը համարուին: Ծով ինկած մարդ մը եթէ ըսէ իրեն.

Կ'աղաչեմ, Էֆենտի:

Ատենապետութի՞ն ընեն:

Կը խղդուիմ, ձեռքս բռնե որ ելնեն...

Կը խոստանամ զքեզ խալսելու, կը պատասխանե, եւ գրպանէն Մասիս լրագիրը հանելով կարդալու կը զբաղի:

Իրեն սկզբունքով՝ այդ մարդը ծովէն հանած եղաւ, որովհետեւ խոստացաւ: Բայց մարդը խղդուեր է, հոգ չէ: Իւսուֆեանի համար խալսած է:

Իբրեւ մատենագիր շատ ծառայած է ազգին, չհրատարակելով իւր երկասիրութիւններն... Եթէ Բերայի հրդեհին մէջ հրոյ ճարակ եղած չեն: Եթէ իւր բոլոր ատենախօսութիւններն լոյս տեսած ըլլային՝ անպատճառ հագար հատոր պիտի կազմէին, եւ հետեւապէս, մեր կեանքն կարճ ըլլալով զանոնք ամբողջ կարդալու համար մեր թոռներուն պիտի պատուիրէինք շարունակել անոնց ընթերցումը, եւ եթէ անոնք ալ չկարողանային լմնցնել՝ տարակոյս չկայ, որ անդիի աշխարհին մէջ ալ Իւսուֆեանի երկարաբանութիւնները կարդալով՝ պիտի պատժուէինք... Ճշմարտութիւնը չվիրատրելու համար կը հարկադրուինք խոստովանիլ թէ՛ որքան ալ հրատարակուած չըլլան իւր ատենախօսութիւններն, անոնցմէ մեծ մասը շատ ընդունելութիւն գտած է ժողովուրդէն, որ փութացեր է անոնց իրաքանչիւրին մէյ մէկ արձան կանգնելու:

Ողիմպիական խաղերու մէջ շատ յառաջ գացած է, կ'ըսեն. մանաւանդ ուխտի մէջ: Բոլոր մեծ մարդերու ողիմպիական խաղերէն մէկն է աս, որուն մէջ ամէնէն յաջողակը մրցանակ կ'առնէ: Այս խաղերուն մէջ տրուած մրցանակները յայտնի են: Այս ասպարէզին մէջ բաւական հրատարակութիւններ ունեցած է... սեղանի վրայ, որոնք, չենք կարծեր, որ անմեղ զբօսանքի սահմանէն անցած ըլլան:

Իւսուֆեան՝ եթէ մաս մաս քննուի՝ Քեօսէ քեհեային պէս ձանձրացուցիչ կողմեր ունի. իսկ երբ ամբողջութիւնը քննադատենք՝ ամէնքս կը միաբանինք ըսելու, թէ չար սիրտ չունի. ազգին շահն իւր շահուն չզոհեր, եւ երեսփոխանական ժողովին մէջ ճնշման ներքեւ չիյնար... ուրիշ բան է, եթէ վսեմափայլ Տատեան Յարութիւն պէյին մէկ կարծիքը հերքելու վրայ է խնդիրը:

Իւր սկզբունքներն են.

Շա՛տ խօսէ, քի՛չ մտիկ ըրէ.

Եթէ քու շուգած մէկուն հետ տեսնուիլ չես ուզեր, բացէ ի բաց մի՛ մերժեր զինքն, այլ այնպիսի ժամադրութեան տեղ մը ընտրէ, ուր չկարենայ գալ:

Երջանկութիւնը շատ անգամ պարզեաբաշխութեան հանդէսներուն մէջ կը գտնուի:

Խոստանալը կատարել է:

Իւսուֆեան Էֆենտին կարճ հասակով, բարձր գաղափարով, վայելուչ երիտասարդ մ'է: Ձմեռը այնչափ մեծ թիկնոց մը կը հագնի, որ մէջը կը կորսուի, այնպէս որ զինքը տեսնողը չըսեր թէ՛ «որքան մեծ թիկնոց հագեր է», այլ կ'ըսէ. «Եղբա՛յր, կարծես թէ սա թիկնոցին մէջ բան մը կայ»: Իւր սովորական դէմքը կը յիշեցունէ մեզ այն մարդուն դէմքը, որ երեսուն քայլ հեռաւորութեամբ թռչունի մը ուշադրութեամբ նշան կ'առնէ եւ երբ հրացանը կը պարպէ՛ կը տեսնէ, որ թռչունը տեղէն անգամ երեքած չէ: